Լաւագոյն մանկավարժական ոյժեր գրաւելու և պահելու համար բարձրել ժողովրդական ուսուցիչների նիւթական և հասարակական դրութիւնը։

Սղմկալի ծափահարութիւններով ծածկուեց զեկուցումի ընթերցանութիւնը. Ընդհանուր ժողովը որոշեց շնորհակալութիւն յայտնել և ի նկատի ունենալ նրան։

—

Յունուարի 26-ին լրացաւ ռուսաց պարբերական մամուլի երկու հարիւրամեակը, որի հիմքը դրեց Մեծն Պետրոսը։ Պարբերական մամուլը Ռուսաստանում սկիզբն առաւ իբրև պետական գործ, բայց յետոյ կամաց կամաց անցաւ և հասարակութեան ձեռքը։ Չը նայած ուրոյն պայմաններին, որոնց մէջ գտնւում էր մամուլը Ռուսաստանում, նա, այնուամենայնիւ, այս երկու հարիւր տարուայ ընթացքում հոկայական առաջադիմութիւն արաւ և ահագին ազդեցութիւն ունեցաւ ռուս հասարակական մտքի զարգացման և ինքնաճանաչութեան արթնանալու գործում։ Ռուսաց մամուլի մեծագոյն մասը աղնիւ կերպով է ծառայում իր կոչման, միշտ ժողովրդի շահերի և արդարութեան ջատագով հանդիսանալով և, որքան թոյլ են տալիս հանգամանքները, մերկացնելով հասարակական չարիքները։ Ռուս մամուլի ընթերցողների թիւը այսօր մի քանի միլիոնների է հասնում, բնականաբար նրա ազդեցութիւնը այնքան մեծ է որ նրան կարելի է համարել ներքին կեանքի նշանաւոր գործոններից մէկը։ Կարելի է ցանկալ որ աւելի ևս բարեյաջող պայմանների մէջ չարունակուի այդ գործոնի կատարելիք դերը այս բազմացեղ կոլոսս պետութեան կեանքում։

Լ. ՍԱՐԳՍԵԱՆ

Յունուար 25.

Ֆինանսների մինիստր ստատս-սեկրետար Սէրգէյ Վիտէի առեւնահպատակ զեկուցման մէջ 1903 թուականի համար պետական հասոյթների և ծախքերի ընդհանուր հաշուեկշիռը արուած է հետեւեալ կերպով. *)

ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՈՅԹՆԵՐ

I

Սովորական հասոյթներ

1) Ուղղակի հարկեր . . . . . 132,0 միլ. ր.
2) Կողմնակի հարկեր . . . . . 405,9 » »

---

*) Առաջ ենք բերում միայն միլիոնները, իսկ ընդհանուր գումարում և՛ ճիշտ գումարը։ Ծ. Խ.

3) Մաքս . . . . . 98,1 » »
4) Պետական մենաշնորհներից . . . . 562,2 » »
5) Արքունական կայքերից և գրամագլխներից 523,4 » »
6) Պետական կայքերի օտարացուցումից . 0,5 » »
7) Յետգնման վճարներից . . . . . 89,1 » »
8) Պետական գանձարանի ծախք. հատուցում 79,0 » »
9) Այլ և այլ հասույթներ . . . . . 6,3 » »

Գումարը 1,897,0 միլ.

II

Արտաքոյ կարգի աղբիւրներ

10) Մշանջեանական աւագ պետական բանկում 2,5 միլ. ր.
11) Պետական գանձարանում կանխիկ 172,1 » »

Ընդամենը 2,071,667,472 ր.

ՊԵՏԱԿԱՆ ԾԱԽՔԿՐ

I

Սովորական ծախքեր

1) Պետական պարտքից վճարներ . . 290,9 միլ. ր.
2) Բարձրագոյն պետական հիմնաքարութիւններ 3,2 » »
3) Սրբազնագոյն սինոդի վարչութիւն . 28,3 » »
4) Կայսերական Դրան մինիստրութիւն . 15,8 » »
5) Արտաքին գործոց » . . 5,7 » »
6) Զինուորական » . . 329,9 » »
7) Ծովային » . . 105,6 » »
8) Ֆինանսների » . . 369,1 » »
9) Երկրագործութեան և պետական կայքերի 49,0 » »
10) Ներքին գործոց մինիստրութիւն . 99,7 » »
11) Ազգային լուսաւորութեան » . . 39,2 » »
12) Հաղորդակցութիւնների » . . 458,4 » »
13) Արդարադատութեան » . . 49,3 » »
14) Պետական կոնտրոլի » . . 8,3 » »
15) Պետական ձիարուժութեան գլխ. վարչ. 2,0 » »
16) Զօրքի պաշարի թանգանալու գէպքում 3,0 » »
17) Զբ նախատեսուած, տարուայ ընթացքում արտակարգ ծախքերի համար . . . . . 12,0 » »

Գումարը 1,880,4 միլ. ր.

II

Արտակարգ ծախքեր

18) Մոսկուա-Եարոսլաւեան երկաթ. $4\frac{1}{2}\%$ օրլ. յետգնումն	2,4 միլ. ր.
19) Սիբիրի երկաթուղու կառուցման . .	20,9 » »
20) Սիբիրեան երկաթուղու հետ կապուած օժանդակիչ ձեռնարկ.	3,4 » »
21) Այլ երկաթուղիների կառուցման . .	145,1 » »
22) Մասնաւոր Ընկերութիւններին նպաստ երկաթուղիներ շինելու	9,2 » »
23) Մասնաւոր անձանց և հիմնարկութիւններին՝ նրանց կայքային իրաւունքների դադարացման համար	10,0 » »
Գումար	191,2
Ընդամենը	2,071,667,472.

Մեր աշխատակից բժշկապետ Վահան Արծրունին մամուլի գլխաւոր վարչութիւնից թոյլտուութիւն է ստացել հրատարակելու Թիֆլիսում հայերէն լեզուով մի բժշկական առողջապահական երկշաբաթաթերթ «Առողջապահական Թերթ» անունով։ Երկշաբաթաթերթի պրոգրամմը հետեւեալն է. 1) Կառավարչական կարգադրութիւններ և կառավարութեան գործողութիւններ, որոնք վերաբերում են ժողովրդական առողջապահութեան. 2) Ինքնուրոյն, թարգմանական և կոմպիլիատիվ յօդուածներ առողջապահութեան, բժշկականութեան և անասնաբուժութեան վերաբերեալ. 3) Քննադատութիւն և մատենագրութիւն նոյն հարցերին վերաբերեալ. 4) Հաշիւներ գիտական, բժշկական, առողջապահական և անասնաբուժական ընկերութիւնների նիստերի մասին. 5) Փոստարկղ (պատասխաններ պրոգրամմի սահմաններում առաջարկած հարցերին). 6) Յօդուածները լուսաբանող նկարներ, նոյնպէս և պատկերներ հասարակական առողջապահութեան ասպարիզում յայտնի դարձած գործիչների՝ սրանց կենսագրութեան հետ միասին. 7) Առանձին յաւելուածներ գրքոյկներով պրոգրամմի սահմաններում, և 8) Մասնաւոր յայտարարութիւններ։ Երկշաբաթաթերթը հրատարակուելու է ամեն ամսի 1-ին և 15-ին, իսկ յաւելուածները լինելու են 4—6 հատ տարուայ մէջ։ Բաժանորդագինն է 2 բուբլի։